ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/46054-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-270-05.09.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1426 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է.

1) հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողներին,

2) Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին, Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին՝ միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի շրջանակներում գործելու հնարավորություն ընձեռել և այդ մասով 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ սահմանափակող կարգավորումներն ուժը կորցրած ճանաչել:

Նախագծի ընդունման հիմնավորմամբ նշվում է, որ միկրոձեռնարկատիրության համակարգում գործելու՝ խնդրո առարկա բացառությունների սահմանումը չունի որևէ հիմնավորում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշյալ համակարգում գործելու

նպատակով իրացման շրջանառությունների սահմանափակումն արդեն իսկ սահմանափակում է տնտեսավարող սուբյեկտների շահույթի ծավալը: Բացի դրանից, նշվում է, որ անհասկանալի է Երևան քաղաքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով բացառության սահմանումը՝ հաշվի առնելով այն, որ Երևան քաղաքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները չունեն հավելյալ շահույթ ստանալու որևէ հնարավորություն՝ պայմանավորված խոշոր խանութների, սուպերմարկետների առկայությամբ և մեծ մրցակցությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ ստորև ներկայացված հիմնավորումներով.

1. 1-ին առաջարկի վերաբերյալ՝

Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների՝ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգից օգտվելու հնարավորությունները սահմանափակվել են ՀՀ կառավարության առաջարկությամբ՝ ս. թ. հունիսի 25-ին ընդունված հարկային օրենսդրության փոփոխությունների՝ ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում ծավալված քննարկումների արդյունքներով՝ հիմքում ունենալով հետևյալ հիմնավորումները՝

1) հանրային սննդի կազմակերպման գործունեության համար կիրառվում է շրջանառության հարկով հարկման այլ՝ առանձնահատուկ համակարգ՝ առանց իրացման շրջանառության սահմանափակման: Ընդ որում՝ կատարված օրենսդրական փոփոխություններով գործունեության այս տեսակի համար սահմանված հարկային բեռը պահպանվել է 2018 թվականի երկրորդ կիսամյակի համար նախատեսված մակարդակում, այն դեպքում, երբ նախկինում ընդունված օրենքներով նախատեսվել էր այն շարունակաբար բարձրացնել 2019 և 2020 թվականների տարեսկզբից.

2) մեր գնահատմամբ՝ հանրային սննդի կազմակերպման ոլորտը զարգանում է և գործում է միջինից բարձր շահութաբերությամբ, հետևաբար գործունեության այս տեսակը միկ-րոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում ընդգրկելը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի.

3) եթե հիմնական մտահոգությունը կապված է զբոսաշրջության զարգացման տեսանկյունից կարևոր համարվող՝ զբոսաշրջային տների հետ, ապա այստեղ խնդիր չկա, քանի որ զբոսաշրջային տները, իրենց հանրային սննդի կազմակերպման

ծառայություններով հանդերձ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվող պահանջներին բավարարելու պարագայում կարող են գործել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում: Անգամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք կարող են օգտվել այս հնարավորությունից: Ընդ որում՝ զբոսաշրջային տների կողմից կազմակերպվող հանրային սննդի ծառայությունները միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում ներառվել են «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացված առաջարկությամբ:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամություն է հայտնում հանրային սննդի կազմակերպման գործունեությունը միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում ներառելու հարցի քննարկումը պահելու օրակարգում և առաջիկայում կրկին անդրադառնալու դրան:

2. 2-րդ առաջարկի վերաբերյալ՝

Միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի ներդրման հիմնական նպատակը իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող ու ֆիսկալ տեսանկյունից հարկային եկամուտներ գեներացնելու մեծ ներուժ չունեցող, ինչպես նաև սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին հարկային արտոնություններ տրամադրելու ճանապարհով գործունեության նպաստավոր հարկային միջավայրի ձևավորումն է: Ինչպես կարելի է նկատել, խոսքն այն հարկ վճարողների մասին է, որոնց նկատ-մամբ հարկային վարչարարության իրականացումը գործնականում պետությունից պահանջում է ավելի շատ ծախսեր, քան նրանցից ակնկալվող հարկային եկամուտները կարող են լինել: Այս առումով, Երևան քաղաքում, ինչպես նաև Երևան քաղաքից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունը միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում ներառելու առաջարկությունը չի բխում նշյալ համակարգի ներդրման հիմքում դրված քաղաքականությունից՝ հետևյալ հիմնական պատճառներով.

1) առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունը գործունեության այլ տեսակների համեմատությամբ բնութագրվում է կապիտալի ավելի արագ շրջապտույտով և գործառնական ցիկլի ավելի կարճ տևողությամբ, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունն ավելի մեծ իրացման շրջանառություններ է գեներացնում՝ հատկապես տնտեսապես ակտիվ տարածաշրջաններում: Այս առումով ակնհայտ է, որ եթե իրացման շրջանառության

իրական ծավալներն ամբողջությամբ հայտա-րարագրվեն, ապա Երևան քաղաքում կամ Երևան քաղաքից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեության արդյունքում ձևավորվող իրացման շրջանառությամբ միկրոձեռնարկատիրության համակարգում գործելու համար նախապայման հանդիսացող՝ իրացման շրջանառության 24 միլիոն դրամի առավելագույն շեմը մեծ հավանականությամբ հաղթահարվելու է: Հակառակ պարագայում՝ մեր կողմից կատարվող հաշվարկները ցույց են տալիս, որ այդ գործունեությամբ զբաղվելը տնտեսապես ձեռնտու չէ, քանի որ մինչև 24 միլիոն դրամ իրացման շրջանառության պարագայում ձևավորվող առևտրային վերադիրներն ուղղակի չեն բավարարում գործունեության այս տեսակով զբաղվելու համար պահանջվող նվազագույն հաստատուն ծախսերը փոխհատուցելու համար: Այստեղից պետք է շատ կարևոր հետևություն կատարել այն իմաստով, որ նախագծով առաջարկվող փոփոխությունը կատարելու պարագայում գործնականում ոչ այնքան հնարավորություն է տրվելու, որպեսզի Երևան քաղաքում կամ Երևան քաղաքից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող և մինչև 24 միլիոն դրամ իրացման շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները գործեն արտոնյալ միջավայրում, որքան տնտեսական շարժառիթներ են ստեղծվելու՝ ամեն գնով իրացման շրջանառությունները թաքցնելու և անհիմն ձևով միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում «տեղավորվելու» համար: Արդյունքում հարկային վարչարարության տեսանկյունից ձևավորվելու են լուրջ և անկառավարելի ռիսկեր՝ կապված ստվերային տնտեսության ծավալների և հարկումից խուսափելու հնարավորությունների ընդլայնման հետ.

2) առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունը հարկային արտոնությունների կիրառությամբ խթանելու առաջարկությունը ոչ միայն չի բխում տնտեսական քաղաքականության հայտարարված՝ արտահանմանը միտված, ներմուծմանը փոխարինող, առաջավոր տեխնոլոգիաների և գիտելիքի վրա հիմնված ոլորտները զարգացնելու ուղղություններից, այլև ուղղակիորեն հակադրվում է այդ քաղաքականությանը.

3) միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի ներդրման և դրա կիրառության շրջանակի ընտրության քաղաքականությունը մշակվել է այնպես, որպեսզի հնարավոր լինի առավելագույնս օգտվել հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության դրական կողմերից և խուսափել հարկման այլընտրանքային

համակարգերի կիրառության բացասական հետևանքներից: Այս առումով գտնում ենք, որ ընտրվել և արդեն իսկ կատարված օրենսդրական փոփոխություններով ներդրվել է հարկման համակարգերի հավասարակշռված մոդել, մինչդեռ ներկայացված նախագծով առաջարկվում է խաթարել այդ հավասարակշռությունը: Մասնավորապես, մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուրջ 41 հազար շրջանառության հարկ վճարողներ զբաղվում են առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ: Ընդ որում՝ նրանց տարեկան իրացման շրջանառության հայտարարագրվող միջին մեծությունը կազմում է ընդամենը 10.7 միլիոն դրամ: Այլ կերպ ասած՝ առաջարկության ընդունումը գործնականում նշանակում է նշյալ տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասին տեղափոխել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, ինչը կխաթարի միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի հասցեականությունը՝ ակնհայտորեն խախտելով նաև հարկման համակարգերի հիմքում դրված մոտեցումների հավասարակշռման սկզբունքը.

4) առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող փոքր տնտեսավարող սուբյեկտներին հարկերից ազատելու առաջարկությունը քննարկելիս շատ կարևոր է նաև անդրադառնալ այդ տնտեսավարող սուբյեկտների ներկա հարկային բեռի չափին: Այսպես՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող՝ շրջանառության հարկ վճարողների համար շրջանառության հարկի գծով հարկային բեռը (շրջա-նառության հարկի արդյունավետ դրույքաչափը) միջինը կազմում է իրացման շրջանառության 2,4 տոկոսը: Ընդ որում՝ սա միջինացված տվյալ է, և այդ առումով պետք է նկատի ունենալ, որ տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն ունեն կատարվող ձեռքբերումները սահմանված կարգով փաստաթղթավորելու դեպքում շրջանառության հարկի բեռը նվազեցնելու ընդհուպ մինչև իրացման շրջանառության 1,5 տոկոսի: Հետևաբար, ակնհայտ է, որ առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար հարկային օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են բավական արտոնյալ պայմաններ, և այս պարագայում տնտեսապես ավելի ակտիվ գոտում իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեությանը սոցիալա-կան նկատառումներով հարկերից ազատելու առաջարկությունը հիմնավոր չէ.

5) ի վերջո պետք է հաշվի առնել նաև այն, որ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունը ներկայումս ընդհանրապես ընդգրկված չէ ընտանեկան ձեռնարկատիրության և ինքնազբաղված անձանց հարկման համակարգերում, ինչը նշանակում

է, որ միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի ներդրմամբ գործունեության այս տեսակի մասով արդեն իսկ սահմանվել են ավելի նպաստավոր պայմաններ.

6) բացի այդ, ներկայացված առաջարկության ընդունումը հանգեցնելու է հարկային եկամուտների նշանակալի կորստի, և անկախ նախագծի ընդունման հիմնավորմամբ նշված այն հանգամանքից, որ ընթացիկ տարում պետական բյուջեի ծախսային մասի կատարողականը ցածր է ցանկալի մակարդակից, միևնույն է, հարկային եկամուտների կորուստը ցանկալի չէ: Այլ կերպ ասած՝ գտնում ենք, որ պետք է լուծել պետական բյուջեի ծախսային մասի կատարողականը ծրագրված մակարդակում պահելու խնդիրը և ոչ թե կատարել անարդյունավետ հարկային ծախսեր: Բացի այդ, մեկ կամ երկու տարվա կարճ ժամանակահատվա-ծում արձանագրված՝ պետական բյուջեի ծախսային մասի ցածր կատարողականով չի կարող հիմնավորվել անարդ-յունավետ հարկային ծախս առաջացնող որևէ առաջարկություն, ընդ որում՝ առանց ժամանակային սահմանափակման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին, Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի շրջանակներում գործելու հնարավորություն ընձեռելու առաջարկությունը համարում ենք, որ սկզբունքորեն ընդունելի չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2019 թվականի N 1426 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կա-տարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-270-05.09.2019-ՏՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 8
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-270-05.09.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հունիսի 25-ի ՀՕ-68-Ն օրենքի 47-րդ հոդվածով առաջարկվող փոփոխություններում 267-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1) 2-րդ կետից հանել «հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ Օրենսգրքի հավելված 3-ով նախատեսված՝ զբոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության),» բառերը,

2) 3-րդ կետից հանել «Երեւան քաղաքի վարչական սահմաններում առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առեւտրի իրականացման վայրերում, առեւտրի կենտրոններում եւ տոնավաճառներում առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաեւ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 01-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված հարկային փոփոխություններով՝ 2020 թվականի հունվարի 01-ից ներդրվում է միկրոձեռնարկատիրության համակարգ, համաձայն որի՝ տարեկան մինչեւ 24 մլն դրամ շրջանառություն ունեցող սուբյեկտներն ազատվում են հարկերից: Օրենքով սահմանված է բացառությունների ցանկը, ովքեր չեն կարող համարվել միկորձեռնարկատիրության սուբյեկտ:

Նշյալ ցանկում են ներառված Երեւան քաղաքի վարչական սահմաններում առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առեւտրի իրականացման վայրերում, առեւտրի կենտրոններում եւ տոնավաճառներում առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը եւ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները:

Այս բացառությունները չունեն որեւէ տրամաբանություն, քանի որ շրջանառության սահմանափակումն արդեն իսկ սահմանափակում է սուբյեկտի շահույթի ծավալը եւ, հաշվի առնելով, որ այս համակարգի ներդրման նպատակներից մեկը սոցիալական աջակցությունն է միկրոձեռնարկատիրությամբ զբաղվողներին, անհասկանալի է Երեւան քաղաքում առեւտրական գործունեության համար բացառության կիրառումը, քանի որ այդ ոլորտը Երեւանում չունի որեւէ հավելյալ շահույթ ստանալու հնարավորություն, քան մարզերում: Ավելին, հաշվի առնելով խոշոր խանութների, սուպերմարկետների առկայությունն ու մեծ մրցակցությունը, շատ հաճախ մայրաքաղաքում նույն բիզնեսն ունի ավելի փոքր շահութաբերություն:

Մյուս կողմից, Երեւանում աղքատության մակարդակը չի զիջում բազմաթիվ մարզերում աղքատության մակարդակին, եւ վաստակած նույն գումարը Երեւանում ունի ավելի քիչ գնողունակություն՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերման մասով:

Հանրային սննդի պարագայում սահմանափակման կիրառումը Հանրապետության ամբողջ տարածքում ավելի անհասկանալի է, քանի որ մարզերում հանրային սննդի բազմաթիվ օբյեկտներ նաեւ զբոսաշրջության զարգացման համար հանդիսանում են ենթակառուցվածքներ եւ, ի տարբերություն առեւտրային գործունեության, հանրային սննդի ոլորտը ներգրավում է ավելի շատ աշխատակիցներ, որը սոցիալական աջակցության տեսանկյունից խրախուսման ավելի մեծ կարիք ունի:

Հատկանշական է, որ այս բացառությունը ներառված չի եղել կառավարության կողմից հաստատված նախագծի տարբերակում, որը քննարկվել եւ քվեարկվել է խորհրդարանի կողմից առաջին ընթերցմամբ. այն ներառվել է երկրորդ ընթերցման քվեարկությունից առաջ՝ առանց որեւէ քննարկում ծավալելու:

Հարկ է նշել, որ այս բացառությունները հանելը պետական բյուջեի համար կառաջացնի ընդամենը 3-4 մլրդ դրամ չստացված եկամուտ, որը բյուջետային մուտքերի զգալի աճի եւ ծախսերի թերակատարման պարագայում չի կարող որեւէ վտանգ ներկայացնել:

Ընդ որում, միկրոձեռնարկատիրության համակարգի ներդրումը եղել է նաեւ կառավարության ծրագրի մաս, որտեղ նշվում է հետեւյալը. «ՓՄՁ-ի զարգացման համար կարեւոր որոշում է միկրոբիզնեսի հարկազատումը: Մինչեւ 24 մլն դրամ իրացման շրջանառությամբ միկրո ձեռնարկություններն ազատված կլինեն շրջանառության եւ եկամտային հարկերից, որը բացի սոցիալական կարեւոր նշանակությունից, կստանա գործարար փոքր գաղափարները

ձեռնարկատիրական մեծ ծրագրերի «տրանսֆորմացնելու» էական նշանակություն:»: Այսինքն, կառավարության ծրագրում խոսք չկա որեւէ սահմանափակման մասին, եւ այս սահմանափակումների առկայությունը տարածվում է մինչեւ 24 մլն դրամ շրջանառություն ունեցող սուբյեկտների մեծ մասի վրա. փաստացի՝ այսհամակարգի ներդրումը վերաբերվելու է սահմանափակ թվով սուբյեկտների:

Ներկայացված նախագծով առաջարկվում է հանել վերոնշյալ երկու բացառությունը, ինչը հնարավորություն կտա իրոք ամբողջական աջակցություն ցուցաբերել միկրոբիզնեսին՝ ինչպես սոցիալական, այնպես էլ բիզնեսի զարգացման տեսանկյունից: